Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԻՆՉՊԵ՞Ս ԱՆԵԼ.

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

AGBU

04.05 | 16:00

Ելակետը

- Թեմայի ռելեվանտությունը
- Դիտակետը
- Խոսքի իրավունքը
- Նպատակը

Կրթության status quo-ն՝ տարածության և ժամանակի մեջ





Իրականության վերափոխման գերակա միտումները

- Գործոնների ավելացում և բարդացում
- Անընդհատ փոփոխություն
- Գիտելիքի և տեղեկատվության կուտակում
- Անորոշության աճ
- Տեխնոլոգիաների զարգացում (4-րդ արդյունաբերական հեղափոխություն)

... և բոլորը կայծակնային արագացմամբ...

Քաղաքական համատեքստը

Քաղաքական կարգի էվոլյուցիայի/առաջադիմության հիմնական միտումը/չափանիշը հանրային որոշումների ապակենտրոնացումն է:

Քաղաքական հեղափոխությունը/առաջադիմությունը ենթադրում է ներկայացուցչական անալոգային «ժողովրդավարությունից» անցում ուղիղ թվային ժողովրդավարության:

Քաղաքական հեղափոխության էությունը

	Պատվիրակված/Էլիտար «ժողովրդավարություն»	Ուղղակի/իրական ժողովրդավարություն
Քաղաքացու գործառույթը	*Պատվիրակում*	*Ամենակցություն*
Կրթության էությունը	*Գիտելիքի ձեռքբերում*	*Սովորել որոշումներ կայացնել*
Քաղաքացիների միավորումը	*Կուսակցություն*	*Գաղափարակցություն*
Միավորման գործառույթը	*Իշխանության հավակնում*	*Գաղափարների առաջմղում*
Կառուցվածքը	*Իշխանություն/ընդդիմություն*	*Ծառայություն*
Հաղորդակցությունը	*Անալոգային*	*Առցանց/թվային*
Որոշումները	*Կենտրոնացված*	*Ապակենտրոն*
Ռիսկերը	*Կենտրոնացում*	*Բաշխում*
Փոփոխությունները	*Բարեփոխում*	*Վերափոխում*
Չափանիշը	*Ժողովրդականություն*	*Արդյունավետություն*
Գնահատականը	*Վարկանիշ*	*Արդյունքներ*

Տնտեսական համատեքստը

Տնտեսակարգի էվոլյուցիայի/առաջադիմության հիմնական միտումը/չափանիշը մարդու ազատության աճն է:

Տնտեսական հեղափոխությունը/առաջադիմությունը ենթադրում է մասնավոր շահի և մրցակցության վրա հիմնված շուկայական տնտեսությունից անցում արժեքների և համագործակցության վրա հիմնված արժեքահեն տնտեսության:

Տնտեսական հեղափոխության էությունը

	Շուկայական տնտեսություն	Արժեքահեն տնտեսություն
Գերակա տնտեսական ռեսուրսը	*Կապիտալ*	*Մարդ*
Զարգացման գերակա աղբյուրը	*Ներդրում*	*Կրթություն*
Մարդու ռեսուրսը	*Աշխատուժ*	*Գաղափար և իրագործում*
Կրթության էությունը	*Գիտելիքի ձեռքբերում*	*Սովորել խնդիր լուծել*
Մարդու գործառույթը	*Վարձու աշխատուժ/Աշխատել*	*Ձեռներեց/Ստեղծել*
Տնտեսական միավորումը	*Բիզնես ընկերություն*	*Կրթության և բիզնեսի միավորում*
Միավորման նպատակը	*Շահույթի ստացում*	*Արժեքի ստեղծում/խնդրի լուծում*
Տնտեսության շարժիչ ուժը	*Անհատական/մասնավոր շահ*	*Ընդհանուր/հանրային արժեքներ*
Գերակա հարաբերությունը	*Մրցակցություն*	*Համագործակցություն*
Գերակա տնտեսական նպատակները	*Ներդրումներ, աշխատատեղեր, տնտեսական աճ*	*Բնակչության թվաքանակ և կյանքի որակ*

Կրթության էության վերափոխումը

	Ներկ. ժողովրդավարություն և Շուկայական տնտեսություն	Ուղիղ ժողովրդավարություն և Արժեքահեն տնտեսություն
Քաղաքականության սուբյեկտ քաղաքացու գործառույթը	*Իշխանության (որոշումների ընդունման) պատվիրակում*	*Որոշումների ընդունում*
Կրթության բովանդակությունը	*Հիմնականում բացակայում է*	*Արժեհամակարգի ձևավորում և համագործակցային հմտություններ*
Կրթության գործառույթը	*Հիմնականում բացակայում է*	*Հանրային գերակա արժեքների ձևավորում և արդյունավետ համագործակցություն*
Տնտեսական սուբյեկտ քաղաքացու գործառույթը	*Մրցակցություն և աշխատուժի «վաճառք»*	*Խնդիրների լուծման նպատակով գաղափարների գեներացիա և իրագործում (Design Thinking)*
Կրթության էությունը	*Գիտելիքի և հմտությունների ձեռքբերում*	*Խնդիրներ լուծելու նպատակով սովորել գաղափարներ գեներացնել և իրագործել*
Կրթության գործառույթը	*«Թանկ» վաճառելու նպատակով աշխատուժի որակի բարձրացում*	*Խնդիրների լուծում*

Նոր կրթության 4 գլխավոր հատկանիշները

- **Ապակենտրոն**

Բարդ ու դինամիկ իրականության պայմաններում կենտրոնացված գիտության ու կրթության ապակենտրոնացումը այլընտրանք չունի:

- **Արժեքահեն**

Աճող անորոշության պայմաններում որոշումների հետևանքները կանխատեսելի չեն, հետևաբար որոշումները դառնում են արժեքային, իսկ հանրային արդյունավետ համագործակցությունը հնարավոր է միայն գերակա հանրային արժեքների ներքո:

- **Կիրառական** (պրակտիկայից բխող և պրակտիկայում *«աշխատող»)*

Այն ինչ ճիշտ է պրակտիկայում, միշտ ճիշտ է նաև տեսության մեջ, այն ինչ ճիշտ է տեսության մեջ, միշտ չէ, որ ճիշտ է պրակտիկայում:

- **Ստեղծարար** *(Design Thinking)*

Միտված ապագայի կերտմանը (Future Shaping)

Կրթության վերափոխման ռազմավարական ուղղությունները

- Արժեքահեն կրթության ներդրում *(Values)*, որպեսզի քաղաքացին կարողանա մի կողմից անհատական արժեքային որոշումներ ընդունել և կրել դրանց պատասխանատվությունը, իսկ մյուս կողմից՝ հանրային արժեքների ներքո արդյունավետ համագործակցել այլ քաղաքացիների հետ:
- Գիտության և կրթության ապակենտրոնացման և տնտեսական գործունեության հետ միաձուլման ճանապարհով՝ տեսության և պրակտիկայի միջև առկա հսկա անդունդի կամրջում *(Competence)*:
- Նոր տեխնոլոգիաների (4-րդ արդյունաբերական հեղափոխություն - արհեստական բանականություն, ինքնաշխատ համակարգեր, Big Data, 3D տպիչներ և այլն) հնարավորությունների օգտագործմամբ և նորերի ստեղծմամբ ապագայի կերտում *(Vision)*:

Կանխատեսվող հետևանքները

- Գիտելիքը ժամանակի ընթացքում կորցնում է իր նշանակությունը
- Գիտության, կրթության և պրակտիկ գործունեության միաձուլում
- Գիտահետազոտական, կրթական և բիզնես ինստիտուտների միավորում նոր հաստատությունների տեսքով
- Տնտեսական գործունեության, կրթության և գիտության համատեղում ամբողջ կյանքի ընթացքում
- Սերունդների համագործակցության նոր մոդելների ներդրում
- Միջոլորտային մասնագիտությունների զարգացում և տարբեր ոլորտների մասնագետների համագործակցության ընդլայնում
- Design Thinking/Future Shaping
- Չորրորդ արդյունաբերական հեղափոխություն

Ներկայիս ժողովրդագրական վիճակը



Տնտեսական/ժողովրդագրական հետևանքները

- Մուտք աշխատանքային շուկա առնվազն 4-5 տարի ավելի շուտ
- Ուսման վճարների խնդրի թեթևացում կամ վերացում
- Գործազրկության մակարդակի կրճատում
- Ծնելիության մակարդակի աճ
- Ելք աշխատանքային շուկայից առնվազն 10 տարի ավելի ուշ
- Սոցիալական և թոշակային բեռի թեթևացում
- Կյանքի տևողության աճ

Շնորհակալություն